

9(47.925)

Մ-24

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՐԱՆ
ԻՒՏԱ.-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ № 1

ԱԿՈՒՅԲ. ՀԱՅՈՐ ՄԱՆԱՆԳՅՈՆ

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ**

Պատ. խմբագիր՝ Ա. Հովհաննիսյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարտիրոսյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնսուլ սրբագրիչ՝ Վ. Յեսայան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՅՅԱՆ ԴԵՄ

Յեվրոպական պատմագիտության մեջ այն կարծիքն և սովորաբար տիրում, վոր իբր թե արևելյան ժողովուրդները հյուսիս և հնազանդ են լինում միշտ ճնշող բռնակախների հանդեպ: Հուսկավոր դերմանական պատմագետ Ք. Մոմզենը, որինակ, իր Հոռմեական պատմության մեջ մատնանշում է, վոր ասիացիներն անսահման հակում ունեն անդործության և ընդունակ չեն ինքնաբերաբար վտարի յեղնելու շահադործող իշխանությունների դեմ¹:

Այդ կարծիքը, ինչպես կտեսնենք, բացարձակապես սխալ է: Նորագույն ուսումնասիրությունները, գլխավորապես ոուսարևելագետների՝ ակադեմ. Բարտոլդի, պրոֆ. Յակուբովսկու և ուրիշների, ինչպես և իմ այստրվա դասախոսությունը, պարզ ապացույց են, վոր ժողովրդական շարժումները և ապստամբությունները տեղի յեն ունեցել պարբերաբար վնչ միայն միջնադարյան Ռուսաստանում և Արևմտյան Յեվրոպայում, այլև Հայաստանում ու Մերձավոր Արևելքում: Հատկապես արաբական տիրապետության շրջանում գյուղացիների, արհեստավորների ու անգամ ստրուկների ըմբոստացումներն ու ապստամբությունները, ինչպես ցույց են տվել վերոհիշյալ ոուս գիտնականները, 9—10 դարերում դառել էյին գրեթե անընդհատ:

Յերբ խոսք է լինում այդ շարժումների մասին՝ պետք է նախ և առաջ ի նկատի ունենալ, վոր մատնանշված ապստամբություններն ունեցել են կամ սոցիալական ու դասակարգային բնույթ և կամ յեղել են ժողովրդական-ազատագրական շարժումներ ընդդեմ ճնշող ու կեղեքող ոտար տիրապետողների:

Սոցիալական-դասակարգային բնույթի շարժումները Մերձավոր Արևելքում, ինչպես այժմ պարզված է, գտնվել են, մեծ

Դրավիտի լիազոր ն—2855. Պատվ. № 491, տիրաժ 2000:

Պետամալարանի Հրատարակչ. տպարան, Յերևան, Տերյան 73:

¹ Моммзен, „Римская История“, т. II, Москва 1887, էջ 369.

մասամբ, Մաղղակյանների ուսմունքի ազդեցութեան տակ: Սասանյան Պարսկաստանի Կավատ թագավորի ժամանակ (488-531թ.) այս ուսմունքը, ինչպես հայտնի յե, անարգել կերպով տարածվել էր Պարսկաստանում և ունեցել էր ժողովրդական ստորին խավերի մեջ հսկայական հաջողութուն: Իր կրօնական մասում այս աղանդը պարզապես խառնուրդ էր Ջրադաշտական դուալիզմի և պարսկա-քրիստոնեական Մանիքեյական աղանդի: Իսկ սոցիալական իր մասում նա քարոզում էր Ֆեոդալական դասային արտոնութեանները վերացում, ընդհանուր հավասարութուն և գույքերի ու հարստութեանները, ինչպես և կանանց, հավասար բաշխում բոլոր մարդկանց մեջ: Մաղղակի ու նրա հետևորդների ասելով, անհավասարութունը չար ու դիվային մի յերևույթ է, իսկ հավասարութեան հաստատումն արդար մի պահանջ է և համապատասխանում է բարի աստծու կամքին:

Կրօնական-սոցիալական այս աղանդի վրա յես հարկավոր համարեցի առանձնապես կանգ առնել, վերոմեջտե Մաղղակյանները, յենթարկվելով հետագայում, վերոհիշյալ Կավատի թագավորութեան վերջին տարիներում, սոսկալի հալածանքների՝ փախել էյին մասամբ նաև Ատրպատական ու իրենց ուսմունքը տարածել էյին Անդրկովկասում և, ըստ յերևույթին, նաև Հայաստանում: Հայտնի յե արդեն, վոր իններորդ դարի առաջին կեսում Ատրպատականում տարածված պարսիկ Բարեկի և նրա հետևորդների «Սուրբամյան» անվանվող աղանդի մեջ ևս կային գույքային հավասարութեան պահանջներ, վոր պետք է վերագրել, անշուշտ, Մաղղակյանների ազդեցութեան: Միանգամայն հնարավոր է նույնպես, վոր հայ Պավլիկյան ու Թոնդրակյան աղանդների վրա ևս կարող էյին վորոշ ազդեցութուն գործած լինել պարսկական այդ աղանդավորները: Սակայն այս խնդիրը կարոտ է դեռ ուշադիր ու լուրջ քննութեան և փաստական հիմնավորման ու ապացուցման մատենագրական համողիչ վկայութեանները ոգնութեամբ:

Տարբեր բնույթի շարժումներ էյին, ինչպես վերև ասացի, ժողովրդական-ազատագրական շարժումներն ընդդեմ ոտար տիրապետութեան: Յեվ հենց այս կարգի՝ 8—9-րդ դարերի յերկու հայկական մեծ ապստամբութեաններն ընդդեմ արաբական տիրապետութեան գլխավոր նյութն են կազմելու իմ այսորվա դասախոսութեան: Իսկ հատկապես կրօնական-սոցիալական բնույթ ունեցող դասակարգային շարժումների մասին Հայաստանում յես խո-

սելու յեմ հաջորդ իմ դասախոսութեան ընթացքում, վորի թեման է լինելու «Քաղաքները Հայաստանում 10-11-րդ դարերում»:

* * *

Արաբական տիրապետութեանը հաստատվել էր Հայաստանում, ինչպես գիտեք, յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին: Նոր նվաճողների տիրապետութեան առաջին շրջանում, սկսած մոտ 650 թվից մինչև 750 թիվը, ուրեմն՝ գրեթե ճիշտ հարյուր տարի՝ Հայաստանը գտնվում էր Ոմեյյան խալիֆաների իշխանութեան տակ, իսկ 750 թվից սկսած մինչև 887 թիվը, այսինքն՝ մինչև Բագրատունյաց թագավորութեան հաստատումը՝ նա յենթարկվում էր Աբբասյան տոհմի խալիֆաներին: Արաբական տիրապետութեան առաջին շրջանում խալիֆայութեան կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և գերիշխող դեր էյին կատարում նոր աշխարհակալ պետութեան մեջ Ասորիքի արաբները, իսկ յերկրորդ շրջանում կենտրոնը դառնել էր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և գերակշիռ դեր էյին խաղում իրաքի արաբները և մահմեդականութուն ընդունած պարսիկ ազնվականութունը:

Արաբական նվաճումների և աշխարհակալ ծավալման մասին առանձնապես հետաքրքիր է արաբական մատենագիր Յակուբի վկայութեանը նրա «Գիրք խաբաշի մասին» յերկում, վորի մեջ նա Ոմար խալիֆին վերագրում է հետևյալ ուշագրավ խոսքերը.

«Մահմեդականներն ուտում են նրանց [նվաճվածներին], քանի իրենք կենդանի յեն, իսկ յերբ մենք ու նրանք մեռնենք՝ մեր վորդիները կուտեն նրանց [նվաճվածների] վորդիներին՝ իրենց կենդանութեան ժամանակ»:

Այս «ուտողներն» ու շահագործողները, իհարկե, առավելապես Ոմեյյան և Աբբասյան խալիֆաներն էյին և իշխող դասերը, մինչդեռ արաբական ու մահմեդական ժողովրդի ստորին խավերը իրենք ևս գտնվում էյին տնտեսական ծանր դրութեան մեջ:

Ոմեյյանների ժամանակ արաբների տիրապետութեանը Հայաստանում, ինչպես և ընակչութեան, իհարկե գլխավորապես ստորին խավերի, — տնտեսական ու հարկային շահագործումն ոտար այս աշխարհակալութեան կողմից յեղել է, մանավանդ

սկզբնական շրջանում, համեմատաբար մեղմ ու տանելի Նրանց մեղմ ու զգուշավոր այդ քաղաքականութիւնը բացատրվում է պարզապէս նրանով, վոր Ռմեյաններն ի նկատի յին ունեցել Հայաստանի ստրատեղիական ու ռազմական մեծ նշանակութիւնը և ուղեցել են, պահպանելով նրա ներքին ինքնուրույնութիւնը և նախարարական նախկին կարգերը՝ ոգտագործել նրա վիճվորական ուժերն իրենց նոր սահմանների պաշտպանութեան համար, ընդդեմ Բյուզանդիայի ու խաղարների: Ռմեյանների այս քաղաքականութեանը կամովին ընդառաջել էյին և իրենք հայկական նախարարութիւնները: Տեսնելով, վոր Բյուզանդական կայսրութեան դորքերը գրեթէ անընդհատ պարտութիւն են կրում, և հույս չուեննարով ոգնութիւն ստանալու հույներէից՝ նրանք հպատակել էյին խալիֆայութեանը, կնքելով նրա հետ հատուկ պայմանագիր:

Այդ դաշինքը, վորով տրվել էր նախարարութիւններին ներքին ինքնուրույնութիւն՝ կնքված էր 653 թվին Մուաւիայի հետ: Թե ինչպիսի մեծ արտոնութիւններ էյին նրանք ստացել՝ այդ յերևում է դաշինքի բովանդակութիւնից:

«Այս թող լինի,—պայման է կապում Մուաւիան,—հաշտութեան ուխտն իմ և ձեր մեջ՝ վորքան ժամանակ դուք կամենաք: Յերեք տարի յես ձեզանից հարկ չեմ առնելու իսկ հետո կտաք, ձեր յերդման համաձայն, վորքան դուք կկամենաք: Ձեր յերկրի մեջ պետք է ունենաք 15.000 հեծելազոր և նրանց պետք է պարենավորեք ինքներդ. արժեքը յես դուրս կգամ հարկից: Հեծելազորը յես Ասորիք չեմ տանի, սակայն ուրիշ տեղ, ուր վոր հրամայեմ՝ պետք է պատրաստ լինին գնալու: Ձեր բերդերը վոնչ ամիրաներ կուղարկեմ, վոնչ արար սպա և վոնչ նույնիսկ մեկ հատ հեծվոր: Թշնամի չպիտի մտնի Հայաստան. իսկ յեթե հույները ձեզ վրա հարձակվեն՝ կուղարկեմ ձեզ ոգնական զորք, վորքան վոր ուզենաք: Յերդվում եմ մեծ աստծու անունով, վոր սուտ չեմ խոսում» (Սերետոս, գլ. 15):

«Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնջ սակ զերբեամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք. և հեծեալ կալէք յաշխարհիդ ժՅ հազար: Եւ հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անդարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամա-

յեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և բշ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ: Թշնամի մի մտցէ ի Հայս. և եթէ դայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զգուրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիջիք: Եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»¹: Այս դաշնագրութեամբ, ինչպես տեսնում ենք, հայկական նախարարութիւններին տրվել էյին ինքնավար իրավունքներ ու բացառիկ արտոնութիւններ: Սակայն չնայած դրան՝ արաբական տիրապետութիւնը, անգամ այս սկզբնական շրջանում, Հայաստանի համար յեղավ աղետալի ու կորստաբեր: Նա պարբերաբար կրկնվող պատերազմների ընթացքում շարունակ հարձակման ու ավերածութիւնների յենթարկվեց: Յեթե նա հավատարիմ երմիւում խալիֆայութեանը՝ նրան անխնա պատժում էյին հույները: Իսկ յեթե անցնում էր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էյին առնում արաբները:

Հայաստանի ամայացումը և տնտեսական քայքայումը Ռմեյանների տիրապետութեան շրջանում պարզ ու վորոշ մասնաանշված է ստորական մատենագիր Դիոնիսիոս Տելմանրեցու ժամանակագրութեան մեջ: Նկարագրելով արաբական Մուաւիա հրամանատարի ռազմերթը (716/7 թ.) դեպի Բյուզանդիա և նրա գալը Արածանի գետի հովիտներն ու ներքին Հայաստան՝ Տելմանրեցին վկայում է, վոր՝

«Այս ամբողջ յերկիրն աչքի յեր ընկնում և ուներ առաջ բաղմաթիվ բնակչութիւն, խաղողի շատ այգիներ, հացացանքեր և ամեն տեսակ սքանչելի ծառեր: Սակայն այնուհետև նա ավերվել էր և նրա շրջանները չուենէյին այլևս բնակչութիւն»²:

* * *

Յեթե խալիֆների տիրապետութեան առաջին շրջանում Հայաստանն ավերվում էր բյուզանդա-արաբական կռիւների պատճառով, վորոնք հաճախ տեղի էյին ունենում Հայաստանի տերի-

¹ «Պատմութիւն Սերետոսի եպիսկոպոսի ի Հերակլէն», Ս. Պետերբուրգ 1879, էջ 138:
² Տես «Chronique de Denys de Tell-Mahré», publ. et trad. par Chabot, Paris 1895, էջ 12:

տորիայի վրա, նրանց տիրապետութեան յերկրորդ շրջանում, գլխավորապես ութերորդ դարում, նա արյունաքամ եր լինում վոչ այնքան այդ կոնֆլիկտների, վորքան ծանր և տաժանելի հարկերի պատճառով:

Ոմեյյանների իշխանութեան ժամանակ, մասնավոր սկզբնական ժամանակաշրջանում, Հայաստանի արքունի հարկերը համեմատաբար ծանր չեյին: Այդ յերևում է վոչ միայն վերոհիշյալ դաշինքի պայմաններից, այլև 12-րդ դարի հայ մատենագիր Սամուել Անեցու ուշագրավ մի վկայութիւնից: Սրա ասելով, յերբ արաբական իշխանութիւնը հաստատվեց Հայաստանում, խալիֆայութիւնը՝

«վերցնում եր յուրաքանչյուր տնից չորս դրամ, յերեք մոտ խորբալ [այսինքն՝ մաղած ցորեն], մեկ ձիատուրակ, մեկ մազե պարան և մեկ ձեռնոց. իսկ քահանաներից, ազատներից և հեծելազորից հրաման տրվեց հարկ չառնել»:

[«յամենայն տանէ առեալ Գ դրամ և Գ մոթ խորբալ, և ձիատուրակ մի, և պարան մի մազէ, և ձեռնաբար մի. իսկ ի քահանայից և յազատաց, և ի հեծելոց՝ ոչ հրամայեաց առնուլ գհարկն»]¹:

Մեջ բերված այս վկայութեան մեջ ի նկատի յե առնված 7-րդ դարում Հայաստանում գործածվող մողը կամ գրիվը, վորի կըշտորը, ինչպես ցույց եմ տվել իմ «Կշիռները և չափերը» աշխատութեան մեջ (եջ 75—79), հավասար եր 9 կիլ. 792 գր., իսկ դրամը նույն այդ դարում Մերձավոր Արևելքում տարածված Սասանյան արծաթ դրամն է, վորը համապատասխան է ըստ դրամական իր արժեքի մոտավորապես այժմյան 50 վոսկի կոպեկի²: Ուրեմն, ըստ մեր այս հաշիվի՝ 3 մող մաղած ցորենը, վոր խալիֆայութիւնն առնում եր յուրաքանչյուր տնից՝ համապատասխան կլինի 29 կիլ. 376 գր. կամ մոտ 2 փթի, իսկ վերոհիշյալ 4 դրամը հավասար կլինի մոտ 2 վոսկի ուրբու: Այս գումարի իրական արժեքը յոթերորդ դարում բավական բարձր եր: Այդ ժամանակաշրջանում մեկ փութ ցորենն արժեք մոտավորապես 25-50 վոսկի կոպեկ:

¹ Տես «Մամուլի քահանայի Անեցու, Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, էջ 82:

² Տես Հ. Մանանդյան, «Նյութեր Հին Հայաստանի-անտեսակտն կյանքի պատմութեան», II, Յերևան 1928, էջ 29, ժան. 6:

Ավելորդ չի լինի նույնպես մատնանշել, վոր վերոհիշյալ վկայութեան մեջ «ազատ»-ներից հետո հիշատակված հեծելազորը, հավանորեն, ռամիկներից կազմված «այրուձին» է, վոր զոյութիւնն ուներ արդեն մարզպանութեան շրջանում: Ուշագրավ է, վոր այս հեծելազորը, վորն ազատ եր հարկերից, ինչպես և «ազատ»-ներն ու քահանաները, ստանում եր Ոմեյյաններից հատուկ ոոճիկ՝ տարեկան հարյուր հազար դահեկան¹ (= մոտ 550. 000 վոսկի ուրբի): Միանգամայն պարզ է, ուրեմն, վոր Ոմեյյանների ժամանակ վոչ միայն ծանր չին յեղել Հայաստանից ստացվող հարկերը, այլև զգալի մասը հարկերի տրվել է վորպես ոոճիկ հայկական հեծելազորին:

* * *

Արաբական հարկային քաղաքականութիւնը հիմնական փոփոխման յենթարկվեց Հայաստանում Ոմեյյանների իշխանութեան վերջին շրջանում Հեշմ խալիֆի ժամանակ (724—743 թ.): Իր թագավորութեան առաջին կամ յերկրորդ տարում այս խալիֆը կարգադրել եր իր Հերթ զորավարին աշխարհագիր անել Հայաստանում և ավելացնել նրա հարկերը: Այդ մասին կարևոր տեղեկութիւններ են հաղորդում Ղևոնդ պատմագիրը և Մովսես Կաղանկատվացին, վոր կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջութեամբ:

1. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», գլ. ԺԷ, էջ 100 (հրատ. 1887 թ.)՝

«Յեվ սա [Հեշմը] իր իշխանութեան առաջին տարում հղացավ մի վատ խորհուրդ՝ ուղարկեց մի վոմն զորավար, վորի անունը Հերթ եր, աշխարհագիր անել Հայոց աշխարհում և ծանրացնել նրա հարկատվութեան ծառայութեան լուծը տեսակ տեսակ չարիքներով:... Յեվ բազում վտանգ հասցրեց մեր աշխարհին մինչ այն աստիճան, վոր բոլորը հառաչում էյին ծանր նեղութեան պատճառով և վոչ վոք չեր կարող ազատվել անհնարին վտանգից»:

[«Եւ սա յառաջնում ամի իշխանութեանն իւրոյ խոր-

¹ Հմմտ. «Հաւաքումն պատմութեան Վարդան Վարդապետի», Վենետիկ 1862, էջ 74 (գլ. ԼԹ): Վերոհիշյալ 100.000-ի գումարը վոմանք հայ բանասերներից յենթարկել են դրամ կամ դրեհմ: Այդ կարծիքը պարզապես սխալ է:

հուրդ վատ ի մէջ առեալ՝ առաքէր զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատուութեան ազգի ազգի չարեօք... Եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցուն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ զոյր ապրել ու մեք յանհնարին վտանգիցն»]:

2. «Մովսեսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», III, ԺԷ, Մոսկվա 1860, էջ 258՝

3. «Իսկ հարյուր յոթանասուն և չորս թվին Հայոց (մեր թվ. 725 թ.) ամառը անասունների կոտորածը յեղավ և ձմեռը՝ Հերթի աշխարհագիրը, վորն անթիվ պարտավորությունների հարկի տակ առավ մարդկանց, անասուններին և հողերի տարածությունները»:

[«Իսկ ի հարիւր եօթանասուն և չորս թուականութեանն Հայոց (ամ տեառն 725), յամառն մահ անասնոց եղև, և ի ձմերան՝ աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»]:

Մեջ բերված այս վկայություններից տեսնում ենք, վոր 725 թվին հաշվառման եյին յենթարկվել Հայաստանում մարդիկ, անասունները և հողերը: Այս աշխարհագրից հետո վերանում եյին պարզապես ֆեոդալական Հայաստանի հարկային նախկին արտոնությունները: Հարկերը զանձվելու եյին այնուհետև վոչ թե առաջվա նման տներից կամ յերգերից, այլ մարդկանց ու անասունների թվի համեմատ և ըստ հողերի տարածության ու, հավանորեն, նաև վորակի: Նախկին յերգահարկի ընույթը հիմնովին այժմ փոխվում եր և սկիզբ եր զրվում գլխահարկի, անասնահարկի և հողահարկի նոր սխտեմի, վորը շուտով կատարյալ աղետ դառավ ամբողջ յերկրի և, մանավանդ, հարկատու ռամիկ ժողովրդի համար:

Արարական հարկային այս ծանր լուծն եր, վոր 8-րդ դարում վորքի հանեց հարստահարված յերկիրը և հիմնական պատճառը յեղավ ժողովրդական կատաղի ապստամբությունների ընդդեմ խալիֆայության:

* * *

Ութերորդ դարի կեսերին արարական խալիֆայության մեջ տեղի ունեցավ քաղաքական մեծ հեղաշրջում: 748 թվին սկսվեցին նրա մեջ ներքին խռովություններ և 750 թվին, համառ ու արյունահեղ յերկարատև կռիվներից հետո, սպանվեց Ոմեյյան տոհմի վերջին խալիֆը, Մրվանը, և իշխանությունն անցավ Աբբասյանների և Իրաքի արաբների ձեռքը:

Այս խռովությունների ժամանակ հայկական նախարարություններն ուղեցին թոթափել արաբական լուծը և ապստամբեցին Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ, հույս ունենալով ոգնություն ստանալու Բյուզանդիայից: Սակայն ապստամբությունը գլուխ չեկավ: Աշոտ Բագրատունին, Հայաստանի իշխանն ու պատրիկը, վորին ստիպել եյին մասնակից լինել ապստամբության, ինչպես և նախարարների մի մասը, բաժանվեցին շուտով Գրիգոր Մամիկոնյանից ու նրա կողմնակիցներից և հպատակվեցին հոժարակամ արաբներին:

Աբբասյանների իշխանության հաստատումից հետո զրությունը Հայաստանում դառավ անտանելի: Աբբասյան հարստության հիմնադիրը՝ Աբուլբաթա ալ-Մաֆֆահը (750-754 թ.թ.) Հայաստան ուղարկեց վորպես կառավարիչ իր յեղբորը՝ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրին: Սրա կառավարման ժամանակ Հայաստանի հարկատու ժողովրդի մեծագույն մասը մատնվեց հետին ծայր չքավորության: Վոչ միայն չափազանց ավերացրին հարկերը, այլ պահանջում եյին այժմ նաև նախկին յերեք տարվա հարկերը, վորոնք խալիֆայությանը չեյին վճարված նախարարական ապստամբության ամբողջ տեղության ընթացքում:

Ղևոնդ պատմագիրը վկայում ե, վոր ալ-Մանսուրը պահանջում եր հարկ մինչևիսկ մեռելներից, ուստի և հրամայել եր քահանաներին ներկայացնել վախճանվածների ու նրանց ընտանիքների ցուցակները: Այս վկայությունը, վոր լավ չե հասկացվել, իմ կարծիքով, պարզ ե ու հասկանալի: Ալ-Մանսուրը կարգադրել եր ըստ իս զանձել ժառանգներից մեռածների գլխահարկը, վորը ապստամբության պատճառով խալիֆայությունը չեր ստացել նրանց կենդանության ժամանակ: Փախչել մի այլ շրջան և ազատվել հարկերից անկարելի յեր, վորովհետև Աբբասյանները հնարել եյին ստուգման ու վերահսկողության հատուկ մի միջոց՝ վորպեսզի կարողանան հայտնաբերել հարկ չվճարողներին՝ ալ-

Մանսուրը հրամայել էր խարանել բոլորի վզերը, վորոնք վճարե-
ելին գլխահարկը՝ կապարե կնիքներով: Ութերորդ դարի ասորա-
կան ժամանակագիր Դիոնիսիոս Տելմահրեցու վկայութեամբ՝ Միջա-
գետքում կառավարչական հատուկ պաշտոնյաները խարանում
եյին յերբեմն, ստրուկների նման, հարկահատուցները վնչ միայն
վզերը, այլ նաև յերկու ձեռքերը, կուրծքերը և կոնակները¹:

Հարկային ծանր այդ լուծը, ինչպես և հարկահանների հա-
լածանքներն ու բռնութիւնները, ցայտուն կերպով նկարագրված
են Աւոնդի պատմութեան հետևյալ վկայութեան մեջ:

«Յեւ տիրեց նրա [Մովսէսի] տեղ Արդլան, վորն ուղար-
կեց յեղբորը, մյուս Արդլային, իր տերութեան բոլոր յեր-
կըրները: Սա, գալով նախ հայոց աշխարհը՝ բազում վշտով
ու նեղութեամբ վտանգեց ամենքին և հասցրեց չքավորու-
թեան ու տնանկութեան. մինչևիսկ պահանջեց հարկեր նաև
մեռելիներից: Նմանապես և վորքերի ու այլքների ամբողջ
բազմութիւնը նա չարաչար տառապեցրեց: Տանջեց նույն-
պես աստվածային խորանի քահանաներին ու պաշտոնյա-
ներին, յենթարկելով նրանց խոշտանգանքների, ծեծի ու
խայտառակ ճիպտահարութեան և պահանջելով, վոր նրանք
հայտնեն վախճանվածների ու նրանց ընտանիքների ա-
նունները: Խոշտանգում էր նաև յերկրի բնակիչներին ամե-
նարոնի ու դաժան հարկապահանջութեամբ և, առնելով
ամեն մի գլխից բազում դրամ արծաթի՝ դնում էր բոլորի
պարանոցներին կապարե կնիք»:

[«Եւ տիրէ ընդ նորա Արդլայ, և առաքէ զեղբայր իւր
զմիւս Արդլա շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեանն
իւրոյ: Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և
նեղութեամբ վտանգէր զամենեւին և հասուցանէր ի չքա-
ւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մե-
ռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց չա-
րալուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշ-
տօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք և քօքօք
այպանութեան և գանիւք՝ ի յայտ ամել զանուանս վախ-
ճանելոցն և զընտանիս նոցուն: Խոշտանգէր և զբնակիչս
աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առ-

նուլ ըստ գլխոյ բազում զուգէս արծաթոյ, և դնել կնիք
կապարեայ յամենեցուն պարանոցս»]¹:

Միայն Հայաստանը չէր, վոր հարկապահանջութեան տաժանելի
որեր ապրեց այս ժամանակաշրջանում: Ալ-Մանսուրը, ինչպես
հաղորդում է Աւոնդը, Հայաստանից անցավ խալիֆայութեան
մյուս յերկրները և, ծանրացնելով ամենուրեք հարկային լուծը,
այնտեղ ևս նույն դաժանութեամբ հավաքեց հարկերը: Նրա ան-
սահման արծաթասիրութեան և ագահութեան պատճառով էր, վոր
անգամ յուր ազգը նրան անվանում էր «հայր» կամ «Աբդու-
ղանդի», այսինքն՝ ծառա ու մեծարող միմիայն դրամի:

Ալ-Մանսուրի Հայաստանից հեռանալուց հետո, նրան հա-
ջորդող Յեզիտ, Բագար ու Հասան կառավարիչների ժամանակ՝
հարկային լուծը Հայաստանում վնչ միայն չթեթևացավ, այլ
ավելի ևս ծանրացավ: Աբրասյանները կարիք ունեյին դրամական
մեծ միջոցների պալատական իրենց շուրջ ու շվայտ ապրուստի
համար: Մեծ գումարներ եյին հարկավոր նաև նոր հիմնված
Բաղդադ քաղաքի շինութեան համար: Հասկանալի չէ, ուրեմն,
վոր այս պայմաններում, ծանրանալու յեր որավուր ինչպես Հա-
յաստանի, նույնպես և խալիֆայութեան մյուս յերկրները, գըլ-
խավորապես, աշխատավոր բնակչութեան դրութիւնը: Աբրաս-
յանները վստահութիւն չունեյին անգամ իրենց արքայական ու
պարսկական հպատակների վրա: Սրանք պետութեան զանազան
մասերում շարունակ վտարեցին յին յինում ու ապստամբում: Խա-
լիֆների իշխանութեան գլխավոր հենարանը վնչ թե իրենց սե-
փական ժողովուրդն էր, այլ (Խորասանից բերված վարձկան
թուրք զորքերը, վորոնց նույնպես անհրաժեշտ էր տալ մնունդ
և ոտճիկ:

* * *

Ալ-Մանսուրի անմիջական հաջորդ՝ Յեզիտ վոստիկանի իշ-
խանութեան ժամանակ դրութիւնը Հայաստանում դառել էր ծայ-
րահեղորեն աղետալի: Դառն ու բռնի հարկապահանջութեան
պատճառով յերկիրը բոլորովին ուժասպառ էր յեղել ու արյու-
նաքամ: Ինչպես վկայում է Աւոնդը (գլ. ԼԲ), Հայաստանում
նվազել էր և գրեթե վերացել դրամն ու արծաթը:

Հնչյուն փողի այս հատնումը, ինչպես մատնացույց է ար-
ված «Հայաստանի առևտուրը և քաղաքները» ռուսերեն իմ աշ-

¹ Տես «Պատմութիւն Աւոնդեայ», Ս. Պետերբուրգ, 1837, գլ. ԻԸ, էջ 127:

¹ Տես «Chronique de Denys de Tell-Mahré», Paris 1895, էջ 104:

խառութիան մեջ¹, չպետք է վերագրել միայն չափազանց հարկատուութիան, այլ, գլխավորապես, պետք է բացատրել նաև նրանով, վոր արարական տիրապետութիան ժամանակ Հայաստանի անտեսական կյանքը զգալի չափով հետադիմել էր և զարգանում էր բնական անտեսութիան հետադարձ հիմքերի վրա:

Դրամի և թանգարժեք մետաղների պակասման ու հատնումի հետևանքով անսահման բարձրանալու յեր, իհարկե, նրանց արժեքը՝ Նույն այս ժամանակ, ինչպես վկայում է իր ժամանակագրութիան մեջ Միքայել Ասորին², Միջագետքում՝

«Ջափրի [այսինքն՝ ալ-Մանսուրի] չարաչար ազահու-
թիան պատճառով այն աստիճան պակասեց արծաթը, վոր յեզն ու ելը ծայրում էյին մեկ դրամի և տղաները տալիս էյին պահանջողներին 5 դրամի»³:

[«Իսկ չարաչար ազահութենէն Ջափրի այնչափ պակասեաց արծաթն, զի գեզն և զէշ դրամի միոյ վաճառէին, և զտղայն հինգ դրամի տային պահանջողացն»]:

Շատերը, ասում է նա (եջ 352), փորում էյին գերեզմանները և փնտռում վոսկի ու արծաթ, վորպեսզի վճարեն իրենց հարկերը՝ Նման դրություն, ինչպես յերևում է նաև հայ մատենագիրների վկայություններից, ստեղծվել էր նաև Հայաստանում:

«Հատեցրեց [Յեզիալ],—ասում է Ղևոնդը⁴,—արծաթի գյուտը յերկրից և հնարավոր չեր վորևե մեկին, տալով յուր գույքը և կարողությունը, ձեռք բերել իր անձի փրկութիան գինը: Չարաչար չարչարանքով, գելոցով, կախադանով և դառն տանջանքներով կեղում էյին մարդկանց կյանքը: Ուստի և շատերը, փախչելով այրերը և յերկրի փապարնեքը՝ գաղվում էյին ու թաքնվում: Վոմանք էլ ձյունախեղդ էյին լինում և գետն էյին իրենց ձգում անտանելի աղետի պատճառով»:

¹ Տես „О торговле и городах Армении“, էջ 133—136:

² Տես «Ժամանակագրութիւն տեառն Միխայելի Ասորւոց պատրիարքի», Յերուսաղեմ 1871, էջ 352:

³ Ուշագրով է, վոր արարական տիրապետութիան ժամանակ սարուկների թիվը իստ մեծ էր: Մալիֆ Մուսավիան ունեցել է, որինակ, միմիայն Աբարիայի իր կալվածներում 4000 սարուկ, Վոմանք ունեցել են մինչևիսկ ավելիքան 10.000 սարուկ: Մեծ գին ունեյին, մանավանդ, սարուկ արհեստավորները:

⁴ Տես Մալխասյանցի և Յեզյանցի հրատարակությունը, Ս. Պետերբուրց 1887, գլ. 17, էջ 135:

[«Ջի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, գելարանօք, և կախադանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»]:

Անհրաժեշտ է նույնպես մատնանշել, վոր առաջին Աբբասյանների ժամանակ վոչ միայն անչափ ծանրացել էյին Հայաստանի հարկերը, այլև սկիզբ էր դրվել նաև նախարարական ինքնավար կարգերի ու նախկին արտոնությունների վոչնչացման: Ղևոնդի վկայությամբ (գլ. ԻԸ)՝ Աբբասյանները կարգադրել էյին, վոր հայկական հեծելազորի ոռնիկը պետք է վճարե վոչ թե խալիֆայությունը, ինչպես այդ սահմանել էյին Ոմեյյանները, այլ իրենք հայ իշխանները: Այսպիսով, ասում է Ղևոնդը, հեծելազորի պարտադիր ծառայությունը դառել էր «զրավաստակ աշխատութիւն»:

Պարզ է, վոր հալածանքի նոր այս պայմաններում՝ խալիֆալ-Մանսուրը այլևս չեր կարող վստահություն ունենալ հայ նախարարների վրա: (770 թվին նա Հասան վոստիկանի հետ թուրքական զորքեր ուղարկեց Հայաստան):

Այս վայրագ ու արյունարբու վարձկանները, վորոնք ավերածությունների ու թալանի առիթ էյին փնտռում զազրելի բռնություններ զործեցին Հայաստանի բնակչութիան անխտիր բոլոր խավերի վերաբերմամբ: Յերկիրը մատնվեց այժմ սովի, տղի ու սարսափի:

Յեւ շուտով արաբական տիրապետութիան դեմ բռնկվեց ընդհանուր ապստամբություն, վորին մեծ չափով մասնակցում էյին նաև ոամիկները:

* * *

Այս ապստամբությունը, վորի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ղևոնդը, ուներ պարզապես ազատագրական բնույթ: Նրա ճիշտ տարին, վորը պատմագիտական յերկերում, մեծ մասամբ, սխալ է տրվում, վորոշվում է, ինչպես ցույց է տվել Ալիշանը¹, 774 թվին: 0

¹ «Այբբարատ», Վենետիկ 1890, էջ 525:

Հուսահատված նախարարները, վկայում ե Ղևոնդը՝

«Յերբ տեսան վոր մեծ վտանգ ե իրենց վրա հասել՝ մահն աչքի առաջ ունեցան և ձեռնամուխ յեղան մի գործի, վորը չեր կարող հաջողութուն ունենալ, վորովհետեւ իրենք քիչ եյին թվով: Սակայն նրանք լավ համարեցին քաջութամբ մեռնել, քան ապրել տաժանալից»:

[«Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եղին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղին յիրս, զոր ոչ կարէին վճարել վան զի նուազունք էին: Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղին յիրս ապստամբութեան»]¹:

Քննչպես և գրեթե միշտ՝ շարժման գրողը և ղեկավարը յեղան Մամիկոնյանները: Ազատագրական ապստամբությունների առաջնորդ լինելը նրանք կարծես թե համարում եյին իրենց սոցիալին սպարտականությունը:

Առաջինը գլուխ բարձրացրեց արաբական բռնությունների դեմ Արտավազդ Մամիկոնյանը: Նա յեկավ Դվին, վորը արաբական իշխանություն վարչական կենտրոնն եր, արտաքուստ ցույց տվեց իրեն մտերիմ ու հավատարիմ և զինեց ու հանդերձեց այստեղ իր գործը, պատրվակ բռնելով, վոր նախապատրաստություններ և տեսնում կովի համար խալիֆայություն թշնամիների դեմ: Դվինից Արտավազդը շտապեց գնալ Կուսայրի (= Լենինական), սպանեց այնտեղ հարկերի հրամանատարին և, վերցնելով նրա հավաքած հարկերը՝ գնաց իր ընտանիքի ու այլ նախարարների հետ Յեզերացոց աշխարհը, վորը գտնվում եր Բյուզանդիայի գերիշխանություն տակ:

Չորս տարի հետո, 778 թվին, նույն այս Արտավազդը, վորին Բյուզանդական կայսրը նշանակել եր ստրատեգ և կառավարիչ Անատոլիկոն թեմի՝ կարողացավ սոսկալի վրեժ առնել արաբներից և, գործակցութամբ բյուզանդական յերեք նշանավոր հայ զորավարների՝ Տաճատ Անձևացու, Վարազտիրոցի և Գրիգորիոսի՝ մեծ ջարդ տվեց և սաստիկ հարված հասցրեց նրանց Գերմանիկ քաղաքի մոտ՝ Կոմմագենեյում:

Շուտով Արտավազդի որինակին հետևեց Մուշեղ Մամիկոն-

¹ Տես հրատարակություն Մախասյանցի և Յեզյանցի, Ս. Պետերբուրգ 1837, էջ 137—138:

յանը, վորը կոտորեց արաբներին, վորոնք գտնվում եյին նրա գավառում, և, գաղթելով ամբողջ իր տնով Կաղզվանի շրջանը՝ ամբացավ Արտագերս բերդում: Այստեղից նա ասպատակեց Բագրևանդ գավառը, կոտորեց հարկահավաքներին ու արաբական զորամասերը և զաղարեցրեց հարկերի պահանջումը և բռնությունները: Մուշեղի մոտ, ինչպես վկայում ե Ղևոնդը (գլ. ԼԴ, էջ 139), հավաքվեցին բոլոր ճնշվածներն ու հարստահարվածները: Արաբական զորքերը, վորոնց ուղարկել եյին նրա դեմ Կարինից և Դվինից, վնչ միայն հաջողություն չունեցան, այլ և մեծ ջարդ կրեցին ու մատնվեցին փախուստի:

Այնուհետև գրեթե բոլոր մյուս նախարարները ևս, Մուշեղի հաջողություններից սիրտ առած՝ միացան նրան իրենց զորքերով և ապստամբությունը դառավ համատարած ու ընդհանուր: Ազատագրական այս շարժմանը մասնակցում եր նույնպես ռամիկ ժողովրդի բազմությունը:

Ահաբեկված արաբները, վորոնց գլխավոր հենակետերը Հայաստանում քաղաքներն եյին՝ Դվինը, Կարինը, Արճեջը և այլ քաղաքավայրերը՝ ստիպված յեղան պատսպարվել այդ ամբուլություններում: Յեկ հայերը, արաբական ծանր լուծից աղատվելու համար՝ պետք ե աշխատելին, բնականաբար, գրավել թշնամու այդ կայանները: Նրանք հարձակվեցին նախ գլխավոր ռազմակայաններից մեկի՝ Կարին քաղաքի վրա, վորը սահմանամերձ եր Բյուզանդիային, և, շրջապատելով քաղաքը, սկսեցին պաշարողական կանոնավոր ու յերկարատև գործողություններ՝ փորեցին խրամատներ ու աշխատեցին պարիսպների տակ ականներ անցկացնել:

775 թվի գարնան սկզբին վտարի կանգնեցին արաբները դեմ Վասպուրականում Արծրունյաց ու Ամատունյաց նախարարները և ուղեցին հարձակվել արաբական նաև մի այլ մեծ կենտրոնավայրի՝ Արճեջ քաղաքի վրա: Նրանք հավաքել եյին իրենց հեծյալ ջոկատները, վորոնց ուղեկցում եյին նաև հետիոտն ռամիկները, Բերկրի գյուղի մոտ: Սակայն հարձակումը դեռ չսկսված՝ Հայաստան խուժեցին հարավից, Խլաթ քաղաքի վրայով, խալիֆայության 30.000 ընտիր խորասանյան զորքերը Ամր գորավարի առաջնորդությամբ:

Աշոտ Բագրատունին, վորը չեր միացել ապստամբության, նախազգուշացրեց նախարարներին վերահաս վտանգի մասին: Սակայն ապստամբները, համարելով այդ նախազգուշացումը նեն-

213

գություն՝ վճռեցին հարձակվել Արճեշի վրա: Բայց այստեղ Ամրի գործերը, վորոնք դարան եյին մտել, գրոհեցին նրանց վրա և, մասնելով հեծելազորը փախուստի, կոտորեցին, գլխավորապես, անդին ու կովի անվարժ հետիոտն ուսմիկներին: Նախարարներից սպանվեցին, ինչպես վկայում է Ղևոնդը, միայն չորս հոգի՝ յերեքը Տրուսյաց տոնից և մեկը Ուրծայ գյուղից:

Ղևոնդ պատմագրի մոտ մասնանշված է Արճեշի կովի աստիճանը և որը՝ «յամսեանն հրոտից, որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շարաթու» (գլ. 17, էջ 147): Համաձայն այս վկայութեան՝ կովի թվականը, ամսաթիվը և որը տոմարական հաշիվների ոգնութեամբ ճշտվի վորոշվում է 775 թվի ապրիլի 15-ին, շարաթ:

Մինչդեռ այս անցքերը կատարվում էյին Արճեշի մոտ, պարզված կարինք, վորի մեջ սաստկացել էր սովը, արդեն մոտ էր անկման: Սակայն Ամր գորավարի հաղթութեան լուրը վհատեցրեց ու լքում առջ բերեց քաղաքը պաշարողների շարքերում: Ապստամբութեան ձախողումը և հետահաս տխուր վախճանը ակնհայտ էյին: Հայերն ունեյին կարինի մոտ ընդամենը մոտ 5000 կովոդ, վորոնց մեծ մասը կազմում էյին հետևակ ու թեթև զինված ուսմիկները, մինչդեռ Ամրը գալիս էր նրանց դեմ, ունենալով իր հետ 30.000 լավ զինված հեծելազոր:

Հայկական փոքրաթիվ զորքը, ինչպես վկայում է Ղևոնդը, կարող էր հեշտութեամբ խույս տալ թշնամու հետ ընդհարվելուց, վորը վեց անգամ ավելի զորավոր էր: Բյուզանդիայի արևելյան սահմանները, ինչպես հայտնի յե, հեռու չէյին կարին քաղաքից: Սակայն ապստամբները, ասում է Ղևոնդը,—

«լավ համարեցին մեռնել, քան տեսնել իրենց յերկրի կորուստը... և թեպետ իրենք թշնամիների թվից ավելի քիչ էյին՝ ինքնակամ հոժարութեամբ յենթարկեցին իրենց կյանքը վտանգի և, ժողովելով իրենց զորագնդերը, մոտ 5000 հոգի՝ գնացին կարին քաղաքից և անցան Բասենի վրայով Բագրևանդ գավառը»:

[«սակայն լաւ համարեցան դմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս... թէպէտև նուազունք էին քան զթիւ թշնամեացն՝ ինքնակամ յօժարութեամբ զիմեցին ի վիշտս. և ժողովեալ զգունդս իւրեանց իբրև արս ԵՌ՝ գնացին ի

քաղաքէն կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրևանդ»¹:

Յերկու բանակների ճակատամարտը տեղի ունեցավ Բագրևանդ գավառում, Արածանի գետից դեպի հարավ, Արճեի գյուղի մոտ: Սկզբում հայկական զորքը կատաղի կերպով հարձակվեց թշնամու գերազանց ուժերի վրա և կարողացավ շփոթութեան առջ բերել նրա շարքերում: Սակայն շուտով Ամրի գործերը վրա ընկան հայերի աննշան ուժերի վրա և, մասնելով նրանց փախուստի՝ կոտորեցին մեծ մասը, գլխավորապես ուսմիկ ժողովրդի: Անվանի նախարարներից ընկան պատերազմի դաշտում Սմբատ Բագրատունի սպարապետը, նրա բարձակիցը և նիզակակիցը՝ Մանակ Բագրատունին, Մամիկոնյաններից՝ Մուշեղ գորավարը և Սամուելը, նաև Վահան Գնունին և ուրիշները: Ապստամբութեանը ճնշելուց հետո՝ արարական զորավարն ասպատակներ սփռեց Բագրևանդի ու նրա սահմանակից գավառների շրջաններում և յենթարկեց այդ յերկրներն ավերածութեան ու կողոպուտի:

Ղևոնդի վկայութեամբ՝ ճակատամարտը Բագրևանդում Արճեի գյուղի մոտ տեղի յեր ունեցել, ինչպես և Արճեշի կոնիվ՝ հայկական հրոտից ամսում՝ «ի նոյն ամսեանն ի հրոտից ի ԺԳ յաւուր երկուշարաթուջ»²: Համաձայն տոմարական պարզ հաշիվների՝ այս վկայութեան մեջ պետք է ուղղել ԺԳ (=14) թիվը և կարդալ «ի հրոտից ի ԺԳ [=13]»: Այսպիսով ստացվում է ճշտվի այս ճակատամարտի տարեթիվը, ամսաթիվը և որը՝ 750 թվի ապրիլի 24-ին, յերկուշարթի³:

775 թվի ընդհանուր ազատագրական ապստամբութեանը Հայաստանում պետք է համարել, անշուշտ, հայ ժողովրդի ամենամեծ հերոսամարտերից մեկը: Մեռնել քաջութեամբ և չթողնել իր հայրենի յերկիրը՝ այդ յեղել է միշտ նշանաբան հերոս ու քաջարի ժողովրդների:

¹ Տես հրատար. Մախասյանցի և Յեղյանցի, Ս. Պետերբուրգ 1887, գլ. 17, էջ 148:

² Նույն տեղ, էջ 151:

³ Արճեշի ու Արճեիի կոնիվների թվականը պատմագրիտական յերկերում, մեծ մասամբ, սխալ է վորոշված: Տարեթիվը ճիշտ է ցույց տրված Ալիշանի «Այբարատ»-ում (էջ 525): Սակայն նրա մոտ ամսաթիվը վորոշված է սխալմամբ ապրիլի 25-ին:

775 թվի ապստամբութեան ճնշումից հետո՝ Հայաստանի պատմութիւնը ութերորդ դարի վերջին քառորդում անընդհատ մի ժամանակագրութիւնն է պարբերական կոտորածների ու դադիթի, ծանր հարկապահանջութեան ու ավազակային կողոպուտների և ամեն տեսակ բռնութիւնների ու հալածանքների:

Արձնշի ու Արձնիի ճակատամարտերից հետո՝ ապստամբած հայ նախարարների ընտանիքները, գլխավորապես Բագրատունիները և Մամիկոնյանները, ստիպված յեղան լքել ու թողնել իրենց կալվածները Բագրևանդում ու հարավ-արևմտյան Հայաստանում և փախչել կամ Բյուզանդիա և կամ Հայաստանի լեռնային ամուր ու անմատչելի արևմտյան շրջանները, վորոնք մոտ եյին կամ սահմանակից Բյուզանդական կայսրութեան:

Լքված վայրերում նախարարական կալվածներն անցան հետզհետե, գլխավորապես, մահմեդական ու արաբ եմիրների և կալվածատերերի ձեռքը, վորոնք իրենց նոր կալվածներում բնակեցնում եյին, մեծ մասամբ, Հայաստան ներգաղթած արաբական ցեղեր: Ութերորդ դարի վերջում և իններորդ դարի սկզբներում Հայաստանի այս մասերում կազմվեցին մահմեդական յերկու մեծ ու հզոր իշխանութիւններ՝ Մանազկերտի ու Արզնի ամիրայութիւնները: Այժմ արդեն սկսել եյին աստիճանաբար քայքայվել նախարարական նաև այլ շրջանները, և Հայաստանի մեծագուշտ մասի մեջ հետզհետե տեր ու տնօրեն եյին դառել մահմեդական ու արաբ իշխանավորները:

Նկարագրելով այս ժամանակաշրջանի պատմական անցքերը՝ Հովհաննես Դրասխանակերտցին տալիս է հայ նախարարութիւնների քայքայման մասին հետևյալ կարևոր վկայութիւնը:

«Յեզ վորովհետե,—ասում է Դրասխանակերտցին,—հազարացիները վերցրին ու բոլորովին տեր դառան Հայաստանին, իսկ յերկրի մեծամեծները պակասեցին և մնացածները թագնվել եյին, ծառայելով նրանց լուծի տակ՝ դրահամար ել մեր պատմութեան այս մասում քիչ են զրույցները մեր իշխանների մասին: Յեզ յեթե թերևս վորե մի բան գտնվի՝ թող քեզ բավական լինի այն, ինչ վոր ինձնից առաջ պատմել է Շապուհ պատմագիրը»:

[«Եւ վասն զի սպառնապուռ Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայս և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և

մնացեալք զօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան, նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց, բայց եթէ գուցէ գացի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապուհ պատմագրէ»]¹:

Ուշագրավ տեղեկութիւնն է հաղորդում նմանապես Ղևոնդ պատմագիրը հայ ուսմիկ ժողովրդի վորոքմելի վիճակի մասին ութերորդ դարի վերջերում: Նշելով մոտ 12.000 հայերի, գլխավորապես աղնվականների ու հեծյալների, գաղթը Հայաստանից Բյուզանդիա Շապուհ Ամատունու առաջնորդութեամբ (հավանորեն, 791 թվ.)՝ Ղևոնդը պատմում է, վոր

«ժողովրդի կեսը, վոր մնացել եյին յերկրում՝ սաստիկ կարոտութեան պատճառով անձնատուր յեղան ստրկական ծառայութեան և դառան նման գաբալոնացիներին փայտ կոտորոցներ և ջուր բերողներ»:

[«Իսկ կէսք ժողովրդեանն որք մնացին՝ առ սաստիկ կարոտութեանն անձնատուրք եղին ի ծառայութիւն ստրկի, փայտակոտորք և ջրաբերք ըստ նմանութեան Գաբաւոնացւոց»]²:

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ և նման վկայութիւններից, 775 թվի անհաջող ապստամբութիւնից հետո հայկական նախարարութիւնները վնչ միայն մեծ չափերով զրկվել եյին իրենց ինքնավարական իրավունքներից ու արտոնութիւններից, այլև, կորցնելով ռազմական ու դիմադրական նախկին իրենց ուժը, սկսել եյին արդեն նվազել ու քայքայվել:

Գտնվելով ծանր կացութեան մեջ՝ հայկական բարձր աղնվականութիւնը, պահպանելու համար իր կալվածներն ու արտոնված դրութիւնը՝ հարկադրված եր այժմ հարմարվել ու հատուցելով տիրողներին: Վրոնք նրանցից, ինչպես, որինակ, Մհերուժան Արծրունին՝ ընդունել եյին մահմեդական կրօնը: Ութերորդ դարի վերջին հենց քառորդից սկսած հայկական բարձր աղնվականութիւնն աշխատում եր բարեկամանալ ու խնամիանալ արաբական եմիրների ու իշխանավորների հետ խառն ամուսնութիւնների միջոցով: Համակերպման վորոշակի նշաններ կարելի է համարել նաև այն, վոր այս ժամանակներից սկսած հետզհե-

¹ Տես «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 111:

² Տես վերոհիշյալ 1887 թվի հրատարակութիւնը, գլ. ԽԲ, էջ 169:

տե՛ս սովորական եյին դառնում հայ ազնվականների շրջանում նրանց արաբականացրած անունները; Ինչպե՛ս՝ Աբուլ-Աբաս, Աբու-Մովան, Աբու-Սահակ, Աբու-Մուսե և այլն:

Հայկական ֆեոդալիզմն ապրում եր ըստ իս ութերորդ դարի վերջերում՝ ավերումների, փախուստի, մեծ գաղթերի ու յերկրի ամայացման վերոհիշյալ խոռվահույզ շրջանում՝ իր ծանր հոգեվաճառը: Թվում եր, վոր նրա վերջնական քայքայումն անխուսափելի յե: Սակայն շուտով, իններորդ դարի առաջին հենց կիսում, նրա վերակենդանացման համար ստեղծվեցին հանկարծ քաղաքական միանգամայն նպաստավոր ու նոր պայմաններ: Իններորդ դարում նա հետզհետե վո՛չ միայն նորից ուժեղացավ, այլև ապրեց Բագրատունյաց Թագավորութան շրջանում տնտեսական ու քաղաքական բուռն ու աննախընթաց վերելքի շրջան:

* *

Նախարարական Հայաստանի վերստին գորեղացմանը մեծապես նպաստեցին խալիֆայութան մեջ ծայր առած խռովութուններն ու ներքին պատերազմները, վորոնք գրեթե անընդհատ եյին դառել իններորդ դարից սկսած:

Բագրատունիները, վորոնք 775 թվի ապստամբութունից հետո ապավինել եյին Հայաստանի լեռնային արևմտյան շրջանները և գտնվում եյին այստեղ Բյուզանդիայի հովանավորութան տակ, ուշուշով հետևում եյին քաղաքական անցքերին խալիֆայութան սահմաններում:

793—794 թվականներին Պարթավում և Փայտակարանում բռնկվեց պարսիկ աղանդավորների մեծ ապստամբութունն Ատաեւ-Մոկաննայի առաջնորդութամբ: Ապստամբները վո՛չ միայն կարողացան մի քանի անգամ պարտութան մատնել իրենց դեմ ուղարկված արաբական վոստիկաններին, այլև իրենք հարձակման զիմեցին ու մոտ չորս ամիս պաշարեցին Հայաստանում Դվին քաղաքը: Նկարագրելով այս անցքերը՝ արաբական մատենագիր Յակուբին իր «Պատմութան» մեջ առանձնապես մատնանշում ե, վոր այնուհետև «Հայաստանի ուժը զորացավ»¹:

Ներքին մեծ խռովութուններին զուգընթաց վերսկսվեցին այս ժամանակ կատաղի ու անվերջ պատերազմները խալի-

ֆայութան ու Բյուզանդիայի և խալիֆայութան ու խաղարների միջև: Այս պայմաններում հայկական նախարարութունների մինչևիսկ հյուծված ու թուլացած մնացորդները ստանում եյին, բնականաբար, քաղաքական վորոշ կշիռ ու նշանակութուն: Բագրատունիները, մանավանդ նրանք, վորոնք ապաստան եյին գտել Բյուզանդիայի սահմանամերձ լեռնային շրջաններում—Սպերում, Տայքում ու Կյարքքում—և բարեկամութուն եյին հաստատել կայսրութան հետ, կարող եյին այժմ առանձնապես վտանգավոր լինել խալիֆայութան համար: Ուստի և խալիֆ Հարուն ար-Ռաշիդը (785—809 թ.թ.) հարկադրված յեղավ վարել նրանց հանդեպ մեղմ ու ղեղող քաղաքականութուն:

Հենց այս Հարուն ար-Ռաշիդի ժամանակ Բագրատունի Աշոտ Մսակերը, Արձնիի կովում սպանված Սմբատ սպարապետի վորդին, կարողացավ մասամբ դրամով և մասամբ զենքով հաստատել իր իշխանութունը Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում: Նոր գրավված այս շրջաններում Բագրատունի այս ճյուղի կենտրոնը դառավ նախ Բագարանը, Ախուրյան գետի վրա, իսկ հետո՝ «Երազղաւորք-Շիրակաւանը»: 806 թվին Հարուն ար-Ռաշիդը կարգեց Աշոտ Մսակերին իշխան Հայաստանի, և այնուհետև Աշոտն իր նվաճումները շարունակեց ավելի մեծ հաջողութամբ:

Հայաստանում խիստ ուժեղացել եր այդ ժամանակ Մանազկերտի ամիրայութունը, վորը գրավել եր Հայաստանի զգալի մասը և նպատակ եր դրել իրեն հիմնել առանձին, խալիֆայութունից անկախ, մի մեծ պետութուն և միացնել իր իշխանութան տակ նախարարական հայ յերկրները Վանա լճից մինչև Արաքս գետը: Մանազկերտի ամիրաները, վորոնք ծագում եյին Ասորիքի կայսրների արաբական ցեղից և հայ մատենագրութան մեջ անվանված են «Կայսիկք», ըստ յերևույթին, անհաշտելի հակառակորդներ եյին Իրաքի իշխող արաբական ցեղերին և Արքայաններին: Իններորդ դարի առաջին քառորդում սրանք մի քանի անգամ ապստամբեցին Դվինի ու Պարթավի վոստիկանների դեմ, և Աշոտ Մսակերն ու նրա յեղբայրը, Շապուհը, ոգտվելով նաև այս խռովութուններից, կարողացան յետ գրավել նրանցից ամբողջ Տարոնը:

Բագրատունիների և հայկական նախարարութունների գորեղացման համար նպաստավոր յեղան նմանապես և դահակայական համառ կռիվները խալիֆայութան մեջ Հարուն ար-Ռաշիդի

¹ Տես Մարկիարա, Բագրատունիների ծագումը, Վիեննա 1915, եջ 38:

վորդիների՝ Մամուռի և Եմինի միջև 809—813 թվերին: Հայ նախարարները ժամանակին կարողացան անցնել Մամուռի կողմը և ոգուտ քաղեցին և այս յերկպառակություններից:

Ներքին այս խռովություններից մի քանի տարի հետո, 817 թվին, բռնկվեց արևելյան Անդրկովկասում պարսիկ աղանդավորների մեծ ապստամբությունը Բաբելի առաջնորդությամբ, վորն իրեն հռչակեց «Մահդի», այսինքն՝ աստվածային ելության մարմնացում: Այդ ահավոր շարժումն ուներ միաժամանակ թե սոցիալական և թե ազատագրական բնույթ: Ապստամբները պահանջում էին, նման Մազդակյաններին, գույքերի, հարստությունների և կանանց հավասար բաշխում և միևնույն ժամանակ նպատակ էին դրել իրենց տապալել արաբական իշխանությունը և վերահաստատել պարսկական նախկին աշխարհակալությունը: Բաբելը, վորին հայ պատմագիրները անվանում են Բաբան, մոտ քսան տարի ահ ու սարսափի մեջ պահեց արաբներին և, ջարդ տալով անընդհատ նրանց զորքերին, տիրեց արևմտյան Մարաստանին, Համադանին, Աղվանքին և արևելյան Հայաստանին: Ապստամբությունը վերջնականապես ճնշվեց միմիայն 837 թվին, և Բաբելը, վորին կենդանի բռնել էր Աղվանքի և Շաքեյի իշխան Մահլը, գլխատվեց Բաղդադում 838 թվին:

Բաբելի ապստամբության ճնշման ժամանակ խալիֆայության զորքերի հետ միասին կռիվներին մասնակցել էին նաև հայ նախարարներն ու նրանց զորքերը: Յեվ այսպիսով՝ նրանք ոգտվեցին մեծ չափով նաև այս յերկպառակություններից՝ ամրացրին իրենց քաղաքական դիրքերը և հնարավորություն ունեցան գրավելու նոր ու նոր շրջաններ և կալվածներ:

Ութերորդ դարի վերջերում Բագրատունիները և հայկական այլ նախարարությունները, 775 թվի մեծ ապստամբությունից հետո, ինչպես տեսանք, սկսել էին արդեն քայքայվել և գրեթե մահամեծ էին: Սակայն իններորդ դարի քառասնական թվականներին հատկապես Բագրատունիները վճի միայն կարողացել էին վերականգնել իրենց նախկին հզորությունը, այլև ավելի էին զորեղ, քան ութերորդ դարում՝ նախքան ապստամբությունը:

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Բագրատունյաց տոհմի տարբեր ճյուղերը տեր էին դառել և իշխում էին թե իրենց հին կալվածների մեծազույն մասում և թե համարյա ամբողջ արևմտյան Անդրկովկասում:

Հիշատակության արժանի յեն մասնավորապես, բացի Բագրատունիների Շիրակի ճյուղից, նաև Կղարջքի ու Արտանուջի Բագրատունիները: Աշոտ Մսակերի հորեղբայրը՝ Վասակը, վորը 775 թվի ապստամբությունից հետո ստիպված էր փախչել Կղարջք՝ հիմնել էր այստեղ Արտանուջի իշխանությունը: Սրա հաջորդները կարողացել էին նույնպես ընդարձակել իրենց իշխանության սահմանները և գրավել էին Քուլավերը և Արդահանը: Հետագայում նրանք, տարածվելով Կուր գետի հովիտներով դեպի հյուսիս-արևելք և տիրելով հետգետե ամբողջ Վրաստանին՝ հիմնադր յեղան նոր հարստության Վրաստանում:

Իններորդ դարի առաջին կեսի վերջերին հայկական նախարարությունները, գլխավորապես Բագրատունիները և Արծրունիները, այնքան էին ուժեղացել, վոր ձգտում էին արդեն վերականգնել ամբողջությամբ իրենց արտոնությունները և ընդլայնել ըստ հնարավորության քաղաքական իրենց իրավունքները և ներքին անկախությունը:

* * *

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Հայաստանի սպարապետ կարգվեց նրա վորդին՝ Սմբատ Արլարապը, իսկ «հրամանատար» և «իշխանաց իշխան» նշանակվեց Բաղարատ Բագրատունին՝ Տարոնի իշխանը: Հայկական նախարարությունները, ոգտվելով այժմ արաբական իշխանության թուլությունից՝ այլևս չէին հանդուրժում Հայաստան ուղարկված կառավարիչների խստություններն ու բռնությունները: Նրանք դիմում էին հաճախ խալիֆներին և պահանջում, վոր Հայաստան ուղարկվեն իրենց ցանկացած մարդիկ: 840 թվին, որինակ, հայ նախարարները Սմբատ սպարապետի գլխավորությամբ ստիպեցին խալիֆ ալ-Մուտասիմին յետ կանչել նոր նշանակված Սալիբ դոստիկանին և թողնել այդ պաշտոնի մեջ Ալին: Այս վերջինը, վորին նրանք անվանում էին «եթիմ», այսինքն՝ վորը, ցանկալի յեր նրանց իր թուլության և մեղմության պատճառով:

842—847 թվականներին, ալ-Վատեկի խալիֆայության ժամանակ, ամբողջ Հայաստանը, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, գտնվել և շարունակ խառնակ ու ապստամբական վիճակում: Այդ աղբյուրների վկայություններից դժվար չէ նաև վրահել, վոր Բագրատունիները, ինչպես և Արծրունիները, տես-

նելով խալիֆայութեան ռազմական ու քաղաքական տիրու-
թյունը՝ ուզեցել են, ըստ յերևութիւն, հետեւել հարեան մահմե-
դական ամիրայութեաննորի որինակին և աշխատել են ազատա-
գրվել արաբական տիրապետութեանից: Սակայն շուտով յերևաց,
վոր նրանց այս հույսերը վաղաժամ ելին:

847 թվին խալիֆայութեան գահը բարձրացավ Մութավա-
քիւր (847—861 թ. թ.), վորը, վարում եր վճռական ու հաստա-
տակամ քաղաքականութեան: Իր իշխանութեան հենց առաջին
տարիներում նա նպատակ եր դրել իրեն, ինչպես վկայում և
Թովմա Արժրունին (II, գլ. Ե), ճնշել և պատժել ըմբոստ հայ
նախարարներին:

849 թվին նա ուղարկեց Հայաստան Աբուսեթին իբրև վե-
րակացու և հարկահավաքման գլխավոր: Յերբ սա մտեցավ Տա-
րոնի սահմաններին՝ իշխանաց իշխան Բագարատը, տեսնելով վոր
Աբուսեթին ունի իր հետ հզոր զորաբանակ՝ շտապեց վճարել նրան
ամբողջ հարկագումարը և խնդրեց, վոր նա ներս չմտնի իր զոր-
քերով Հայաստան: Թովմա Արժրունին վկայում և, վոր Մու-
թավաքիւր և Աբուսեթին ուզեցել են զրկել իշխանութեանից հատ-
կապես Բագարատին և Աշոտ Արժրունուն: Սակայն յերբ Աբու-
սեթը տեղեկութեան ստացավ, վոր Բագարատն ու Աշոտը դա-
շինք են կնքել և գործում են միասին՝ նա խուսափեց կովից և
վերադարձավ Բաղդադ: Նախ քան հեռանալը՝ նա թողեց վոր-
պես փոխանորդ և Հայաստանի կառավարիչ ու հարկահավաք
Մուսեյին, վորը ստորին Աղձնիքի և Արզն քաղաքի ամիրան եր
և Բագարատի քրոջ ամուսինն եր:

850 թվին Մուսե ամիրան, վորը կոված եր իր աներձագե-
հեա՝ մտավ իր զորքերով Տարոն իբր հարկահավաքման համար:
Բայց Բագարատին ոգնութեան հասավ անմիջապէս Աշոտ Արժ-
րունին, և Բագարատը Վասպուրականի զորքերի ոգնութեամբ
այնպիսի ջարդ տվեց արաբներին, վոր Մուսեն հազիվ կարողա-
ցավ իր գլուխն ազատել: Տարոնի այս կովից ղեռ առաջ Աբու-
սեթն ուղարկել եր նաև Վասպուրական հարկահավաքման հազա-
րապետ Ալա Ծովափիին, վորը Մանազկերտի «Կայսիկը» կոչվող
ամիրաների տոհմիցն եր: Սա, հաստատվելով Աղբազում, ասպա-
տակել եր Վասպուրականի զանազան շրջանները, մատնելով յեր-
կիրն ավերածութեան և կողոպուտի: Բայց Աշոտ Արժրունին մեծ
ջարդ տալով նրան՝ դուրս եր քշել Վասպուրականից:

Հայրացավ Մութավաքիւրն այս անցքերը լսելով և նորից

ուղարկեց Հայաստան Աբուսեթին, հանձնարարելով նրան ձեր-
բակալել Բագարատին և Աշոտին: Արաբական զորքերը, ներխու-
ժելով Տարոն և Վասպուրական՝ պետք և վերացնելին առաջին
հերթին հայկական այս իշխանութեանները: Արշավանքի ժամա-
նակ, ղեռ Հայաստան չհասած՝ ճանապարհին մեռել եր Աբուսեթը:
Ուստի և վոստիկանութեան սքա պաշտոնը և վերոհիշյալ հանձ-
նարարութեանները տրվեցին վորդուն՝ Յուսուֆին:

851 թվին Յուսուֆը մեծ ու ընտիր զորքով յեկավ նախ
Վասպուրական և բանակեց Արժրունիների Աղամակերտ վոստա-
նում: Այստեղից նա ուղարկեց յերկրի զանազան կողմերն ասպա-
տակներ և միաժամանակ հրավիրեց իր մոտ Աշոտին ու ուզեց
նրան խաբէյութեամբ ձերբակալել: Բայց Արժրունայց իշխա-
նը, վորին հայտնել ելին այդ մասին, վերցրեց իր ազատագործը
և հեռացավ Մարդաստան:

Շուտով Յուսուֆը հաշտութեան և խաղաղութեան հաստատեց
Աշոտի հետ և, վերցնելով նրանից պատանդներ ու ապահովելով իր
թիկունքը՝ յեկավ Խլաթ: Բագարատն այժմ ինքն իրեն եր թող-
նըված: Ինչպես վկայում և Թովմա Արժրունին (Դպր. II, գլ. Զ),
Յուսուֆը հայանեց Բագարատին, վոր ձմեռվա ցրտերի պատճա-
ռով ինքը շտապում և վերադառնալ արքունիք և ուզում և Հա-
յաստանի իշխանութեանը նրան հանձնել: Տարոնի իշխանը, վոր
խաբվել ու յեկել եր նրա մոտ, շղթայվեց և ուղարկվեց Մամա-
ռա, ուր գտնվում եր Մութավաքիւր:

Այնուհետև Հայաստանի զանազան կողմերն ուղարկվեցին
կուսակալներ, վորոնք ամեն տեղ մեծ անգթութեաններ զործե-
ցին: Իսկ Տարոնում արաբական զորքերը մեծ թվով զերիներ
վերցրին և նրանց մի մասը չնչին դներով ծախեցին Ասորիքում
ու այլ յերկրներում և մյուս մասը պահեցին Մուշ քաղաքում,
վոստիկանի ու իրենց ձմեռանոցում վորպես ծառաներ: Գարնանը
նրանք մտադիր ելին սրի ու ավերածութեան մատնել ամբողջ
Հայաստանը, և վճռել ելին, վերացնելով հայկական իշխանու-
թեանները՝ հաստատել յերկրում իրենց անմիջական տիրապե-
տութեանը:

Հայաստանի դրութեանը դառնում եր այժմ նույնքան աղե-
տալի, ինչպես և ութերորդ դարի վերջերին: Վտանգը սպառնում
եր դարձյալ վե՛չ միայն նախարարական իշխանական դասին, այլ
ամբողջ հայ ժողովրդին: Ուստի և այժմ ևս տարբերային կերպով
բունկվեց ընդհանուր ասպատակութեան, վորն ուներ, ինչպես և

775 թվին, ազատագրական բնույթ: Այս մեծ ապստամբությունը, հատկապես Տարոնում տեղի ունեցած անցքերը 852 թվին՝ մանրամասն նկարագրված են Թովմա Արծրունու մոտ և հիշատակված են նաև արարական աղբյուրներում:

Թովմա Արծրունու համապատասխան այդ վկայությունը մեջ եմ բերում առանց կրճատումների:

«Այն ժամանակ,—պատմում է Թովման,—լեռան բնակիչները, տեսնելով վոր իշխանին գերի տարան և վոր իրենց ևս նույնը պիտի վիճակվի, ինչ վոր դաշտեցիներին՝ յեկան միասին Խույթի մեկնակազենների բազմությունն արվեստազիտության իրենց ուղղամտիցներով, վոր ձեռք եյին բերել ձմեռային ինքնապաշտպանության կարիքների համար: Նրանք վերցրել եյին իրենց նիզակները, վոր միշտ կրում եյին, զգուշանալով անտառների վորջերում գտնվող գազաններից կամ իրենց վրա հարձակվող թշնամիներից: Գրոհ տալով քաղաքի [Մուշի] վրա ու պաշարելով նրան՝ նրանք սրի մատնեցին և կոտորեցին զորքերը, ազատեցին բանտից Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ թշնամու թալանը»:

[«Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խույթայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմեռայնոյ հնարաւորեալ էին: Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հաննն յարգելանէն. և գերեանցն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»]¹:

Իր այս վկայության շարունակության մեջ Թովմա Արծրունին նմանապես հաղորդում է, վոր Սասունի լեռնականները, վորոնք հարձակվել եյին արարական զորքի վրա Խույթեցի Հոֆնանի ք

¹ «Թովմայի վարդապետի Արծրունու, Պատմութիւն տանն Արծրունեաց», հրատ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ 1837, Դպր. II, գլ. է, էջ 119—120:

առաջնորդությամբ, այս կովում սպանել եյին նաև իրեն՝ Յուսուֆ վոստիկանին:

Սուրանապետ ուշագրավ է, վոր ապստամբած սասունցիները, ինչպես յերևում է Թովմայի վկայություններից, վնչ թե «աղատ»-ներ կամ աղնվականներ եյին, այլ պարզապես ուսմիկ գյուղացիներ:

Նրա հաղորդած տեղեկությունները Խույթեցիների մասին այնքան կարևոր են ու հետաքրքիր, վոր կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ:

«Այստեղ համառոտ կերպով կտամ,—ասում է Թովմա Արծրունին,—լեռան բնակիչների նկարագիրը՝ թե ինչպիսիք են և կամ ովքեր են, կամ ինչ կերպ նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով հայթայթում են իրենց ապրուստը և բավարարում իրենց կարևոր պետքերը: Նրանց բնակությունները գտնվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթներում: Ապրում են ազգատոհմերով և այնքան միմյանցից հեռու յեն, վոր յեթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավե, նրա ձայնի բոմբյունը հազիվ կարող է վորևե տեղ լսվել, և տպավորություն է գործում, իբր թե արձագանք է ժայռերի միջից: Նրանց կես մասը խոտորել է հայրենի բնական լեզվից, վորովհետև հեռու տեղեր են բնակվում և միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր ու ոտարոտի լեզվով: Յեվ այնքան խրթնախոս են և իրար անծանոթ, վոր մինչևիսկ պետք ունեն թարգմանների: Իբրև սնունդ գործադրում են գանազան ընդեղեններ, գլխավորապես կորեկ կոչվող բույսը, վորը սովի տարիները վոմանք անվանում են հաց: Կորեկը նրանք վոռոգում են վոտքերով (°) անտառների բաց տեղերում կամ ցանում են յերկամատանի փայտատներով: Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում են բրդեղեն շորեր. վոտնամանները պատրաստում են կոշիկների ձևով այծերի մորթիներից: Թե ամառը և թե ձմեռը բավարարվում են միևնույն սնունդով և միևնույն հագուստով»:

[«Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիմբդ կամ հրպիսի ոք են, և հրպէս հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս»

իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք, և ընակութիւն նոցա ի խորածորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց: Եւ ընակեն առանձին ըստ տունս աղգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հաղիւ թէ ուրեք կարիցէ աւնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով. և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անդամ կարօտանան. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ուռզեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. և է զգնատ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հարաւորին զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականն զամառն և զձմեռն»¹]:

Թովմա Արծրունու այս վկայութեան մեջ, ինչպես տեսնում ենք, խիստ հետաքրքիր տեղեկութեաններ են հաղորդված Սասունի բնակչութեան մասին: Այդ տեղեկութեաններից յերևում է, վոր մինչևիսկ իններորդ դարում խութեցիները գտնվում էին դեռ անտեսական ու սոցիալական նախնական վիճակում՝ ապրում էին աղգատոհմերով և ունեյին յերկրագործական հետամնաց տնտեսություն:

Ուշագրավ է մասնավորապես, վոր խութեցիների մի մասը խոսել է, ըստ յերևույթին, վնչ թե հայերեն, այլ ինչ վոր խըրթին ու անհասկանալի լեզվով: Թովմա Արծրունին մեջ բերված վկայութեան շարունակություն մեջ այդ լեզուն համարում է «խրթնի և անհետազոտելի» և այդ լեզվով խոսող ապստամբներին անվանում է «գոեհնք Սարոց»: Հենվելով սակայն նորագույն ուսումնասիրությունների վրա՝ կարելի է ըստ իս ամենայն հավանություն հետեցնել, վոր դրանք վնչ թե ասորի գոե-

հիկներ էին, այլ, հավանորեն, խաղեր կամ ուրարտացիներ,՝ վորոնք, ինչպես հայտնի է, ձուլվել էին հետզհետե յեկվոր արմենների հետ և համարվում են, ինչպես և արմենները, հայերի նախնիքները: Թովմա Արծրունու վկայությունը խիստ արժեքավոր է, վորովհետև ցույց է տալիս, վոր հին խաղերի մնացորդները պահպանվել էին մինչև իններորդ դարը լեռնային Սասունում:

852 թվի ընդհանուր մեծ ապստամբությունը, վորը պարագպես ժողովրդական-ազատագրական բնույթ ուներ, ճնշվեց դատան ու անողք խստութեամբ: Մութավաքիլն ուղարկեց Հայաստան մոտ յերկու հարյուր հազար թրքական և արաբական զորք, Բուղայի առաջնորդությամբ, վորը սրի, գերութեան ու ավերածութեան մատնեց ամբողջ յերկիրը և, ամենից առաջ, չարաչար պատժեց Տարոնի և Սասունի բնակիչներին: Հայ նախարարները և գլխավորները կալանավորվեցին և ուղարկվեցին Սամառա, ուր նրանք, փրկելու համար իրենց կյանքը և գույքը՝ դրեթե բոլորն ընդունեցին մահմեդականություն:

Բուղայի արշավանքից հետո՝ նախարարական Հայաստանը, վորը սոսկալի հարված էր ստացել, թվում էր, վոր անկարող կլինի ուշքի գալ և վերականգանանալ: Սակայն շուտով, ինչպես և 775 թվի ապստամբությունից հետո, նա վնչ միայն կարողացավ վերականգնել իր նախկին հզորությունը, այլև ունեցավ տնտեսական, քաղաքական և կուլտուրական բուռն և անորինակ վերելքի շրջան:

Իններորդ դարի յերկրորդ կեսին սկսվեցին Բյուզանդական կայսրության հաղթական արշավանքները Հայաստանի սահմանամերձ հարավ-արևմտյան շրջաններում, և խալիֆայությունը, վորը շարունակ պարտություն էր կրում, հետզհետե թուլացավ և դիմեց դեպի անկում:

867 թվին գահ բարձրացավ Բյուզանդիայում Մակեդոնիայից Պոլիս յեկած Բարսեղ անունով մի հայ: Սա մինչ այդ բյուզանդական արքունիքում ախոռապան էր և իր գեղեցկություն պատճառով պալատական կանանց առաջին սիրելին էր: Գերմանական գիտնական Հ. Գեյցերը իր «Բյուզանդական կայսրների պատմություն» մեջ ասում է, վոր Բարսեղ Ա. կայսրը (867-886թ.)՝ Մակեդոնական գիտնախալի հիմնադիրը՝ «այն հանճարեղ ու անսահման ուժեղ բնավորություններից էր, ինչպես Սուլլան, Թեո-

¹ Տես «Թովմայի վարդապետի Արծրունու, Պատմութիւն տանն Արծրունեաց», հրատ. Պատկանյանի 1887, Գպր. II, գլ. Է, էջ 120—121:

դորիւնը, Խլոդովիւնը և Նապոլեոն Ա-ը¹: Հենց այս Բարսեղն էր, վոր քայլ առ քայլ ջախջախիչ հարվածներով վոչնչացրեց արարների պաշտպանողական ամրացրած դիրքերն արևելյան սահմաններում և կարողացավ ներխուժել Միջագետք: Հաղթական այս առաջխաղացման ժամանակ նախարարական Հայաստանի կողմնորոշումը ստանում էր, բնականաբար, խիստ կարևոր նշանակութուն: Ֆրանսիական գիտնական Լորանի կարծիքով² Բարսեղ Ա-ի հաղթութիւնը կլիներ լիակատար, յեթև հայերը ևս հարձակվեյին արարների աջ թևի վրա և ոգնեյին նրան մտնելու խալիֆայության կենտրոնական յերկրները: Հայաստանի ստրատեգիական սպառնական այդ դիրքային դրությամբ և բացատրվում, Լորանի կարծիքով, խալիֆայության քաղաքականության կտրուկ փոփոխութիւնը հայ նախարարների և հատկապես Բագրատունիների հանդեպ: 885|6 թվին Աշոտ Բագրատունին ստացավ խալիֆ Մուտամիդից (870—892 թ. թ.) թագ և թագավորական տիտղոս: Սկսվեց ֆեոդալական Հայաստանի արագ վերածնութիւնը ու զորեղացման մի նոր շրջան, վոր տևեց մինչև սելջուկյան արշավանքները:

¹ Տես Մեսրոպ Տեր-Մովսիսյանի հայերեն թարգմանութիւնը, Եջմիածին 1897, էջ 194:

² Տես «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև» (Փրանսերեն), Փարիզ 1919, էջ 260 և այլն: